



	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
1	<p>Անգետիկը գրատախտակին գրել է մի նախադասություն.</p> <p><i>Թռչված թռչունը թռչում էր դեպի բյունը:</i></p> <p>Քանի՞ ճիշտ գրված բառ գտավ Գիտունիկն այդ նախադասության մեջ:</p> <p><i>Ա. 1</i> <i>Բ. 2</i> <i>Գ. 3</i> <i>Դ. 4</i> <i>Ե. 5</i></p>	Ա	1
2	<p>Ո՞վ է միավորում հայտնի հեքիաթների հերոսներին:</p> <p><i>Անբան Հուռի, Չախորդ Փանոս, Քաջ Նազար, Կիկոս, Կացին ախպեր</i></p> <p><i>Ա. Ղազարոս Աղայան</i> <i>Բ. Գրիմ եղբայրներ</i> <i>Գ. Հովհաննես Թումանյան</i> <i>Դ. Հանս Բրիստիան Անդերսեն</i> <i>Ե. Ալեքսանդր Պուշկին</i></p>	Գ	Հովհ. Թումանյան

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
3	<p>Պատասխանի տարբերակներում բերված բառերը, բացի մեկից, նույն ընտանիքից են: Ո՞րն է օտարը:</p> <p>Ա. թեյնիկ Բ. բաժակ Գ. գթալ Դ. դանակ Ե. կաթսա</p>	Գ	գթալ
4	<p>Հայոց ո՞ր գետի անունն է գաղտնագրվել:</p> <p>Առաջին տառը հավասար է հինգերորդին, երկրորդ տառը՝ չորրորդին, 3-րդ տառը հայերենի այբուբենի 2-րդ տառն է:</p> <p>Ա. Արաքս Բ. Որոտան Գ. Թարթառ Դ. Դեբեդ Ե. Քասաղ</p>	Դ	Դեբեդ

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
5	<p>Քանի՞ ընդհանուր հնչյուն ունեն <i>էկրան</i> և <i>ներկա</i> բառերը:</p> <p><i>Ա.</i> 1 <i>Բ.</i> 2 <i>Գ.</i> 3 <i>Դ.</i> 4 <i>Ե.</i> 5</p>	Ե	5

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
6	<p>Ի՞նչ է գաղտնագրվել նկարելուկով:</p> <p style="text-align: center;"> 100 ՏԱՐԻ +  =  </p> <p> <i>Ա.</i> հարյուրյակ <i>Բ.</i> պահարան <i>Գ.</i> դարակ <i>Դ.</i> հեծանիվ <i>Ե.</i> պահակ </p>	Գ	դարակ

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
7	<p>Պատասխանի տարբերակներից որի՞ հերոսներն են դասավորված ճիշտ նույն հաջորդականությամբ, ինչ նրանց արձակած ձայները բերված շարքում.</p> <p><i>մլավոց, քառաչ, մոնչոց, վրնջոց, կշկչոց</i></p> <p>Ա. կով, կատու, ձի, հավ, առյուծ Բ. առյուծ, կով, հավ, ձի, կատու Գ. ձի, առյուծ, կով, հավ, կատու Դ. հավ, կատու, ձի, առյուծ, կով Ե. կատու, կով, առյուծ, ձի, հավ</p>	Ե	կատու, կով, առյուծ, ձի, հավ





	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
8	<p>Ի՞նչ թիվ է թաքցրել մեղվիկը:</p> <p><i>արև — 4</i> <i>տերև — 5</i> <i>որովայն — 8</i> <i>կայտառ — 6</i> <i>որդի — 5</i> <i>մատյան — 6</i> <i>որմնադիր —</i> </p> <p><i>Ա. 5</i> <i>Բ. 6</i> <i>Գ. 7</i> <i>Դ. 8</i> <i>Ե. 9</i></p>	Ե	9

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
9	<p><i>Մի հին Գ՞կա այդ թվում, Թե՞ այդպես է հնձ թվում:</i></p> <p>Ա. գիհի Բ. հանգ Գ. գինի Դ. հինգ Ե. ազահ</p>	Դ	հինգ
10	<p>Մանեն գրատախտակին մի նախադասություն գրեց: Գոռը կարդաց և մի աղավնի նկարեց: Ի՞նչ էր գրված գրատախտակին:</p> <p><i>Մենեչնուքեխեայբդատայբդատուրոնիուևուեչնուքեուզաումեն</i></p> <p>Ա. Մենք աղավնի ենք պահում: Բ. Մենք խաղաղ երկինք ենք ուզում: Գ. Մենք խաղաղ էինք մեր լեռների պես: Դ. Մենք խաղաղություն ենք ուզում: Ե. Մենք խաղաղ արարել ենք ուզում:</p>	Դ	Մենք խաղաղություն ենք ուզում:

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
11	<p>Երեխաները դասարանում խաղ էին խաղում: Յուրաքանչյուրը պետք է մի առարկա ցույց տար՝ ըստ խաղի որոշակի կանոնի: Տաթևիկը ցույց տվեց տետրը, Դավիթը՝ դասագիրքը, Պետրոսը՝ պայուսակը, Կարինեն՝ կավիճը: Ի՞նչ ցույց տվեց Սարգիսը:</p> <p>Ա. ուտին Բ. քանոն Գ. սրիչ Դ. մատիտ Ե. գրիչ</p>	Գ	սրիչ

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
12	<p>Բառաշարքում <i>օ</i>-ն քանի՞ անգամ է «սայթաքել»:</p> <p><i>քնքշօրօր, նրբօրեն, ամենօրյա, ամանօրյա, անօրեն, տնօրեն</i></p> <p><i>Ա. 1</i> <i>Բ. 2</i> <i>Գ. 3</i> <i>Դ. 4</i> <i>Ե. 5</i></p>	Դ	չորս


	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
13	<p>Ճիշտ հերթականությամբ դասավորելով նկարները՝ կգտնես, թե ինչի կացարանն է գաղտնագրվել նկարելուկով:</p> <div style="display: flex; justify-content: space-around; align-items: center;"> <div style="text-align: center;">  4 </div> <div style="text-align: center;">  5 </div> <div style="text-align: center;">  1 </div> <div style="text-align: center;">  3 </div> <div style="text-align: center;">  2 </div> </div> <p> <i>Ա.</i> արջ <i>Բ.</i> չղջիկ <i>Գ.</i> մրջյուն <i>Դ.</i> մեղու <i>Ե.</i> արագիլ </p>	Դ	մեղու

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
14	<p>Ուսուցիչը հանձնարարեց ամբողջացնել դարձվածքները՝ ծաղկի փոխարեն գրելով համապատասխան թիվը: Ո՞ր տարբերակն ընտրեց Գայանեն:</p> <p> <i>օր,</i>  <i>գիշեր հարսանիք անել</i></p> <p> <i>սարի հետևում</i></p> <p> <i>քարի տակ</i></p> <p>Ա. 3 Բ. 5 Գ. 7 Դ. 13 Ե. 40</p>	Գ	յութ

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
15	<p>Ի՞նչ բառ է որոշակի օրինաչափությամբ թաքնվել բերված բառաշարքում:</p> <p><i>բարդի, դարակ, թերհաս, թեփուկ, երեկո</i></p> <p><i>Ա. կարաս</i> <i>Բ. դահուկ</i> <i>Գ. փեթակ</i> <i>Դ. հասուն</i> <i>Ե. կորեկ</i></p>	Բ	դահուկ

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով					Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
16	<p>Աջ կողմում բերված է տառային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Պատասխանի տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառային ծածկագրին:</p>					Բ	<p>930 + <u>642</u> 1572</p>
	<p>Ա. 920 + 642 <u>1562</u></p>	<p>Բ. 930 + 642 <u>1572</u></p>	<p>Գ. 830 + 725 <u>1555</u></p>	<p>Դ. 735 + 642 <u>1377</u></p>	<p>Ե. 930 + 641 <u>1571</u></p>		
					<p>ՄԵԿ + ԻՆԸ <u>ՏԱՍԸ</u></p>		


	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
17	<p>Գոհարը <i>ստորակետ</i> բառը բաժանեց տառերի, այնուհետև այդ տառերից երկու բառ կազմեց այնպես, որ չօգտագործված ոչ մի տառ չմնաց: Պատասխանի տարբերակներում բերված n՝ ը բառագույգը կազմեց Գոհարը:</p> <p>Ա. որակ + սերտ Բ. երակ + կրետ Գ. երես + տանկ Դ. տետր + ակոս Ե. արոս + տարի</p>	Դ	տետր + ակոս

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
18	<p>Տարբերակներից չորսում երկուական տառ նույն սկզբունքով և՛ պոչ է, և՛ գլուխ: Ո՞ր տարբերակն է զուրկ այդ հատկությունից:</p> <p>Ա. ժամատախտակ Բ. գոմատեր Գ. թավազարդ Դ. դեկավար Ե. մարտագիծ</p>	Ե	մարտագիծ
19	<p>Թռչունների ժողովում որոշակի ընտրությամբ հավաքվել էին մի խումբ թռչուններ՝</p> <p>սոխակ, թութակ, դեղձանիկ, կաչաղակ, ճնճղուկ,</p>  <p>Ո՞ր թռչունը պետք է լինի մեղվիկի փոխարեն:</p> <p>Ա. արծիվ Բ. արագիլ Գ. կարաս Դ. կռունկ Ե. կկու</p>	Դ	կռունկ


	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
20	<p>Կարենը <i>հաշվիչ</i> բառում նվազարանի փոխարեն տեղադրեց հայոց այբուբենի տառանուններից մեկը, և լսվեց հոգոց: Ո՞ր տառի անունն ընտրեց Կարենը:</p> <p><i>Ա.</i> դ <i>Բ.</i> ո <i>Գ.</i> ս <i>Դ.</i> ր <i>Ե.</i> ն</p>	Բ	ո
21	<p>Բերված բառերից մեկը խախտել է բառաշարքը: Ո՞ր բառն է դա:</p> <p><i>գաթա, արաբ, սարդ, կարգ, վարդ, բազե, մարզ</i></p> <p><i>Ա.</i> արաբ <i>Բ.</i> սարդ <i>Գ.</i> կարգ <i>Դ.</i> բազե <i>Ե.</i> մարզ</p>	Բ	սարդ

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
22	<p>Ի՞նչ բառ է գաղտնագրվել նկարելուկով:</p> <p style="text-align: center;">ՄՁ</p> <p> <i>Ա.</i> առած <i>Բ.</i> ծառա <i>Գ.</i> առյուծ <i>Դ.</i> ծառ <i>Ե.</i> ծուռ </p>	Ա	առած

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
23	<p>Պատասխանի տարբերակների բառագույգերից մեկը որոշակի օրինակաչափությամբ միահյուսվել-դարձել է՝</p> <p style="text-align: center;"><i>գառղմյաուրսուամկ</i></p> <p>Ո՞ր բառագույգն է դա:</p> <p>Ա. սամուրայ — գյուղացի Բ. գումարտակ — աղյուս Գ. արմունկ — մայրուղի Դ. գումարում — աղյուսակ Ե. մասուր — յուղանկար</p>	Դ	գումարում - աղյուսակ

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
24	<p>Ի՞նչ է թաքցրել մեղվիկը:</p> <p><i>սիրամարգ = զարի +</i> </p> <p>Ա. զանգվածի միավոր Բ. մոլորակ Գ. թռչուն Դ. Սևանա լճում ապրող ձուկ Ե. բույս</p>	Բ	մոլորակ

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
25	<p>Միմյանց գաղտնի տեղեկություններ հաղորդելու համար մեր նախնիները հայերենի այբուբենի յուրաքանչյուր տառ ներկայացրել են կետերից և մի գծիկից բաղկացած ծածկագրով: Դրանում՝</p> $\text{Թ} = \begin{array}{c} \cdot \cdot \cdot \\ \cdot \cdot \cdot \\ \cdot \end{array}, \quad \text{Մ} = \begin{array}{c} \cdot \cdot \cdot \\ \cdot \cdot \cdot \\ \cdot \end{array}, \quad \text{Վ} = \begin{array}{c} \cdot \cdot \cdot \\ \cdot \cdot \cdot \\ \cdot \end{array}$ <p>Վերհիշիր այբուբենը, կռահիր, թե ինչ օրինաչափությամբ են կետերը կապված տառերի հետ և որոշիր, թե հետևյալ ծածկագրում ինչ բառ է գաղտնագրված:</p> $\begin{array}{c} \cdot \cdot \cdot \\ \cdot \cdot \cdot \\ \cdot \end{array} \quad \begin{array}{c} \cdot \\ \cdot \end{array} \quad \begin{array}{c} \cdot \cdot \cdot \\ \cdot \cdot \cdot \\ \cdot \end{array} \quad \begin{array}{c} \cdot \cdot \cdot \\ \cdot \cdot \cdot \\ \cdot \end{array} \quad \begin{array}{c} \cdot \cdot \cdot \\ \cdot \cdot \cdot \\ \cdot \end{array} \quad \begin{array}{c} \cdot \cdot \cdot \\ \cdot \cdot \cdot \\ \cdot \end{array} \quad \begin{array}{c} \cdot \cdot \cdot \\ \cdot \cdot \cdot \\ \cdot \end{array}$ <p> Ա. ընտանիք Բ. այբուբեն Գ. հայրենիք Դ. հայերեն </p>	Ե	հայերեն

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
26	<p>Ի՞նչ բառ է գաղտնագրվել ժամացույց-նկարելուկով:</p>  <p> <i>Ա.</i> արանք <i>Բ.</i> սրունք <i>Գ.</i> բարձունք <i>Դ.</i> քառասուն <i>Ե.</i> լեռնանցք </p>	Ե	լեռնանցք

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
27	<p>Խաչբառի նարնջագույն վանդակներում միևնույն ձայնավոր հնչյունը տեղադրելուց հետո մեղվիկի փոխարեն ո՞ր տառը պիտի ընտրես, որ ուղղահայաց բոլոր սյունակներում բառեր ստացվեն:</p> <div data-bbox="682 568 1066 1039" data-label="Image"> </div> <p> <i>Ա.</i> օ <i>Բ.</i> ծ <i>Գ.</i> ճ <i>Դ.</i> մ <i>Ե.</i> վ </p>	Բ	ծ

	Առաջադրանքը՝ պատասխանների 5 տարբերակներով	Ճիշտ պատասխան	Ճիշտ պատասխան /բառերով/
28	<p>Պատասխանի տարբերակների բառագույգերից չորսը կազմվել են միևնույն օրինաչափությամբ: Ո՞ր բառագույգը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:</p> <p><i>Ա.</i> արջ — թաթ <i>Բ.</i> արծիվ — մագիլ <i>Գ.</i> վարազ — ժանիք <i>Դ.</i> ձի — սմբակ <i>Ե.</i> այծ — կճղակ</p>	Գ	վարազ — ժանիք